ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<< 18 >> հունիսի 2013թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**
Ա.Բաղրամյան, Լ.Բարսեղյան, Մ.Գաբոյան, Ա.Գրիգորյան,

Վ.Եդիգարյան, Գ.Թաթարյան, Տ.Հովհաննիսյան, Ռ.Մխիթարյան,

Է.Մկրտչյան,Մ.Սահակյան,Ա.Վարդանյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը, Գ.Մալխասյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Հ.Սարգսյանը, Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, համայնքի ղեկավարի օգնական Ժ.Պետոյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Զ.Եգանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հ.Կարապետյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ծրագրերի և վերլուծության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետի ժ/պ Կ.Բաղալյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա.Կարապետյանը, կրթության բաժնի պետի ժ/պ Ա.Նախշքարյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի ժ/պ Մ.Ղազարյանը, տրանսպորտի բաժնի պետի ժ/պ Ա.Եղոյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետի ժ/պ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետի ժ/պ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետի ժ/պ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Ղազարյանը, քարտուղարության բաժնի պետի ժ/պ Ն.Բարսեղյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝
ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը, ողջունելով համայնքի ավագանու անդամներին, ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ, Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին» N 198-Ն որոշմամբ հաստատված 2-րդ, 3-րդ և 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշմանը կից՝ համապատասխանաբար NN 1-3 հավելվածների:
2. Գյումրի համայնքի 2013թ. Վարչական բյուջեի պահուստաֆոնդի 3-րդ եռամսյակի նախատեսված 53775.0 (հիսուներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ) հազար ՀՀ դրամը ուղղել 3-րդ եռամսակի ֆոնդային բյուջեով հաստատված գործառական և տնտեսագիտական դասակարգման ուղղություններին՝ համաձայն հավելված 4-ի: 3.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին կատարել համապատասխան փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 170- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 170-Ա որոշման 5-րդ կետով հաստատված՝ Գյումրու քաղաքապետարանի <<Ա.Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում (հավելված N 44) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Ավելացնել նոր 10-րդ տող՝
ըստ հավելվածի սյունակների, 10-րդ տողում համապատասխանաբար կարդալ՝ <<Հ/Հ>> սյունակում՝ <<10>>, <<Հաստիքի անվանումը>> սյունակում՝ <<Տնտեսվար>>, <<Հաստիքային միավորը >> սյունակում՝ <<1>>, <<Պաշտոնային դրույքաչափը>> սյունակում՝ <<62050>>, <<Ամսական>> սյունակում՝ <<62050>>, <<Տարեկան>> սյունակում՝ <<434400>>,

2) <<Ընդամենը աշխատավարձ >> տողում՝ <<30>> թիվը փոխարինել <<31>> թվով, <<1816350>> թիվը փոխարինել <<1878400>> թվով, <<21796200>> թիվը փոխարինել <<22230600>> թվով,

3) <<Ընդամենը>> տողում՝ <<1866500>> թիվը փոխարինել <<1928550>> թվով, <<22398000>> թիվը փոխարինել <<22832400>> թվով,

4)<<Աշխատակիցների թվաքանակը>> տողում՝ <<23>> թիվը փոխարինել <<24>> թվով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

Արտահայտվեցին,- Լ.Բարսեղյան**,-** <<Ես գտնեում եմ, որ հարկավոր է թույլտվություն տալ միայն երկու մեքենայի գնման համար: Ավելորդ եմ համարում <<Մշակույթի և երիտասարդության հարցերի>> բաժնի համար ծառայողական մեքենայի ձեռք բերումը>>:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային միջոցների (ծառայողական երեք ավտոմեքենաների) անհետաձգելի համարվող գնումները բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Թույլատրել անհետաձգելի համարվող գնումները իրականացնելու երկրորդային շուկայից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 10
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լ.Բարսեղյան)

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել՝ Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչված շենք - շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ *N* 18/1 ՀԱՍՑԵԻ 400,0(ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ) ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՌՆԱԴԱՏՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵԼԲԵՐՏ ՀՐԱՆՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մարմաշենի խճուղի *N* 18/1 հասցեի 400,0(չորս հարյուր) քառ.մ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17042013-08-0021),որը չի մտնում Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, սեփականության իրավունքով անհատույց տրամադրել բռնադատվածի կարգավիճակ ունեցող, քաղաքացի Հելբերտ Հրանտի Եղիազարյանին՝ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Հելբերտ Եղիազարյանի հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը՝ համաձայն N 3 հավելվածի:
6. Համաձայնություն տալ Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու Գառնիկ Մեժլումյանին (անձնագիր՝ AC03616525, տրված՝ 20.08.1998թ, ՀՀ Ոստիկանության 016-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված՝ մինչև 20.08.2013թ, սոց.քարտ.՝ 2409560134, հաշվառված՝ ք.Գյումրի, Մուսայելյան 38շ., բն 25):
7. Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 170-Ա որոշման 5-րդ կետով հաստատված N 4 հավելվածով հաստատված Գյումրու քաղաքապետարանի <<Ա.Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակից հանել 11-րդ, 12-րդ և 13-րդ տողերը, իսկ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողում՝ <<69,1>> թիվը փոխարինել <<46.1 >> թվով, <<3219179>> թիվը փոխարինել <<2229179>> թվով, <<3973580>> թիվը փոխարինել <<2731200>> թվով, իսկ <<47682960>> թիվը փոխարինել <<32774400>> թվով:
8. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին՝ Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Կ.Մանասյանին
Կ.Մանասյանը ներկայացրեց որոշման նախագիծը և հիմնավորումը:

Արտահայտվեցին,- Լ.Բարսեղյան,- <<Սկզբունքորեն դեմ եմ այն բանին, որ համայնքային սեփականությունը նվիրատվությամբ հանձնվի Հայաստանի Հանրապետությանը, քանի որ հետագայում մենք հնարավորություն չենք ունենա իրականացնելու վերահսկողության մեր ֆունկցիան>>:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի հաշվեկշռում հաշվառված ճանապարհային լուսացույցները և այլ տեխնիկական միջոցները նվիրատվությամբ հանձնել Հայաստանի Հանրապետությանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 10
դեմ – 1 (Լ.Բարսեղյան)
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈՂՈՑ>>-Ը, <<ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ>>-Ը ԱՐՏԱՇԵՍ ՎԱՍԻԼՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին
Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Անվանափոխել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող <<Կոմսոմոլի փողոց>>-ը՝ <<Արտաշես Վասիլյան փողոց>>, <<Կոմսոմոլի փողոց 1-ին նրբանցք>>-ը՝ <<Արտաշես Վասիլյան փողոց 1-ին նրբանցք>>:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի <<Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության>> բաժնին՝ կազմակերպելու վերը նշված փողոցի անվանատախտակի պատրաստման և տեղադրման հետ կապված աշխատանքները:

3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի <<Ֆինանսատնտեսագիտական>> բաժնին՝ կատարելու անվանատախտակի պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացված ակտերի:

4. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Գյումրու բաժին, հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ № 14/1 ՀԱՍՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «Մուշ-2» թաղամասի № 14/1 հասցեի 0,189901 (զրո ամբողջ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր մեկ) հա ընդհանուր մակերեսով անավարտ բնակելի շինությունը՝ կառուցապատման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 0, 216086 (զրո ամբողջ երկու հարյուր տասնվեց հազար ութսունվեց)հա մակերեսով համայնքապատկան հողամասի հետ միասին, օտարել աճուրդով:
2. Ելնելով «Պ.Ա.Գ. էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 9-ի № 066 հաշվետվությամբ գնահատված շինության շուկայական արժեքից՝ օտարման մեկնարկային գին սահմանել 4100000 (չորս միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Աճուրդը կազմակերպել և իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

12. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Ասատրյանին
Ռ.Ասատրյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 12-ի <<Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին >> N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի <<Հանձնաժողովի նախագահ>> պարբերության մեջ <<**Ռ.Ասատրյան**-Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար>> բառերը փոխարինել <<**Ա.Ղազարյան** - Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովման պաժնի պետ>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

13. ԱՐԱՄ ՀԱԿՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի ժ/պ Մ.Ղազարյանին
Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արամ Հակոբի Սարգսյանին շնորհել <<Գյումրու պատվավոր քաղաքացի>> կոչումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա.ԲԱԴԱԼՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց արտաքին կապերի և արարողակագի բաժնի գլխավոր մասնագետ Ա.Բադալյանին
Ա.Բադալյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վավերացնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սիան համայնքների միջև 2013թվականի հունիսի 8-ին կնքված համագործակցության համաձայնագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

15. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 45 (ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝
Գյումրու ավագանու սոցիալական հարցերի մշտական
հանձնաժողովի անդամ՝Մ.ՍԱՀԱԿՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց **Գյումրու ավագանու սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Մ.Սահակյանին**

Մ.Սահակյանը ներկայացրեց հարցը, հիմնավորումը և անցկացրած ուսումնասիրությունների արդյունքների եզրակացությունը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Թվով 45 (քառասունհինգ) անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի, Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից կանխիկ տրամադրել 470.000 (չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

<u>ԼՍԵՑԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԸ</u>

ԼՍԵՑԻՆ.

16. ԳՅՈՒՄՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,</u>
<u>ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)</u>

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին: Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Գյումրին՝ 2013 թվականի ԱՊՀ համագործակցության մշակութային մայրաքաղաք» միջպետական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի 8/6/01 գործառնական դասակարգման նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին(4819) տնտեսագիտական դասակարգման հոդվածից 17 200.0(տասնյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումար հատկացնել Գյումրու Զարգացման Հիմնադրամին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով առաջին կիսամյակում Գյումրու Զարգացման Հիմնադրամին հատկացված գումարի շրջանակներում հիմնադրամի կողմից ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՎԱՀԵ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՀԱՐԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին: Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Վահե Տերտերյանի և Գրիգոր Հարբյանի ընտանիքներին Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> 10/4/1/51 գործառական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 տնտեսագիտական գործառական հոդվածից հատկացնել ամենամսյա դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 20000-ական (քսան հազար) ՀՀ դրամի չափով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ. Ջիլավյանին կատարել համապատասխան վճարումները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին: Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 30–ի <<Մայիսյան տոների կապակցությամբ դրամական օգնություն տրամադրելու մասին>> N 51-Ա որոշման հիման վրա կատարված վճարումները:
2.Գյումրու զինկոմիսարիատի կողմից ներկայացված ճշտված ցուցակների համաձայն Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> 10/4/1/51 գործառական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից> /4729/ տնտեսագիտական գործառական հոդվածից հատկացնել լրացուցիչ գումար՝ 3 510.0 /երեք միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամի չափով:
2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին իրականացնել վճարումները, վերջնաժամկետ սահմանելով 2013թվականի հուլիսի 10-ը: Չվճարված գումարները հետ վերադարձնել Գյումրի համայնքի գանձապետական համապատասխան հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին
Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում կազմակերպել ավտոկայանատեղեր՝ համաձայն հավելվածի.

2. Առաջարկել Գյումրու քաղաքապետին՝ սույն որոշման հավելվածում նշված փողոցներում կամ հրապարակներում ավտոկայանատեղեր կազմակերպելու հստակ տեղերը, սահմանները և ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կայանման ձևը նախապես համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի ոստիկանության հետ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղեր կարող են կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, շինարարական և այլ նորմերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով չթույլատրվող գոտիների կամ հատվածների, հաշվի առնելով տվյալ տարածքի առանձնահատկությունները և ավտոկայանատեղ կազմակերպելու նպատակահարմարությունը, ընդ որում՝

1) փողոցի երթևեկելի գոտում՝ միայն երթևեկելի մասի եզրի երկարությամբ ավտոտրանսպորտային միջոցների հաջորդական տեղաբաշխմամբ՝ պայմանով, որ չարգելափակվեն բակային մուտքերը,

2) փողոցի երթևեկելի մասի տեղային լայնացում ունեցող հատվածում՝ ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Ավտոկայանատեղերի գործունեությունը կազմակերպվում է Գյումրի համայնքի ղեկավարի կամ Գյումրի համայնքի ենթակայության կազմակերպության կողմից: Գյումրու համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք գանձում են տուրք՝ Գյումրու քաղաքապետի հետ կնքված պայմանագրին համապատասխան:

5. Ավտոկայանատեղի կազմակերպիչը տուրքը գանձում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և Գյումրու համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ (որոշումներով) սահմանված դրույքաչափերի սահմաններում և վճարման ձևին համապատասխան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից :

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 11
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

Արտահայտվեցին,- Լ.Բարսեղյան,- <<Առաջարկում եմ կիսով չափ կրճատել տրվելիք տարածքի մակերեսը>>:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի <<Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան փողոցի N 252 հասցեի շինությունից տարածք առանձնացնելու և այն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) նվիրաբերելու մասին>> N 45-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման երկրորդ պարբերության երկրորդ տողից հանել <<կիսանկուղային հարկից>> բառերը,
2) նույն տողի <<5>> թիվը փոխարինել <<202.20>> թվով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 10
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լ.Բարսեղյան)

Որոշումն ընդունվեց

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ